

18418

891.99  
S-44

Pumpkin 1915

255

Նդիա Տէր-Հայրապետեան

# ՕՂԱՆԱԽՈՐԴԻ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Գ Օ Է Մ

Արտատպած „Արեւ“ օրաթ.

Օ՛, Մայր-Հայաստան,—ծիրանի մահիճ՝  
 Լիքն արիւն ու ծուխ, սև օձ ու կարիճ,  
 Ուր այսքան դարեր՝ ցարենի հասկը,  
 Վաղը խաղողի խաչ կապել կը ծքին,  
 Գալարում է հեղ իմ անտէր ազգը,  
 Աչերը յառած՝ աղօթում կրկին...

Օղանաւ. տեսիլներից.

2004

## ВИДѢНІЯ ЛЕТЧИКА

переп. изъ газ. „Аревъ“.

891.99  
 S-44

Բազու 1915 թ.  
 տպ. Ն. Երեանցեանի:

Баку, 1915 г.  
 тип. Н. Эриванцова

5409.

Եղիա Տէր-Հայրապետեան

891.99

5-44

ՕՂԱՆԱԻՈՐԴԻ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Գ Օ Է Մ

Արտատպած „Արեւ“ օրաթ.

1001  
4135

ВИДѢНІЯ ЛЕТЧИКА

переп. изъ газ. „Аревей“



Բազու. 1915 թ.  
աղ. Ն. Երևանցիանի:

Баку, 1915 г.  
тип. Н. Эриванцова.

4238

## ՏԱՃԿԱՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐԻՆ\*

□□□□□□

Ամալ, որո՛տ, կայծակ... Կարկառը  
զարկեց  
եւ երեսն արտի սեւ աւեր ծածկեց...  
Բայց մ'շակ էր Հայ՝ հին, անխո՛նջ,  
յամաւ.—

Ճոռքաղ արաւ ու կրկին ցանեց.  
եւ եկաւ զարուն ու նորից ամաւ,  
ծլեց արտը ծով, շքեղ ծածանեց...  
—Հայկական անմեռ հատիկներ էին,  
Հողը հրաշալի եւ մշակն էր հին...  
եղ. Տ.-Հ.

\* Գրքոյկիս վաճառումից գոյացած  
գումարը յատկացում է տաճկահայ որբուկ-  
ների օգտին:

Հ.Տ.Ի.



## ՕՂԱՆԱԻՈՐԴԻ ՏԵՍԻԼՆԵՐԸ

[ Գ օ է Մ ]

առաջին տեսիլներ

—  
И миръ мечтою благородной  
Предъ нимъ очищенъ и обмытъ...  
М. Лермонтовъ.

1.

Ժամ էր հրաշքի... Եւ ահա թուաց՝  
Ձին եմ բռնել ես հէքիաթում լսած.  
Բնքճւշ, սպիտակ, օ, շարմաղ լուսնի  
Յօղն է ծծել միշտ ու ցոլքը ձիւնի.  
Թեւերն արևատ, լիքն անուրջ և բոյր,  
Լիքն անուշ մրմունջ. լանջը փոթորիկ,  
Ալիք փրփրուն ու շունչն է զիփիւս.  
Սմբակը գոհար և այնպէս գողարիկ...  
Ու հեռւմ է խենթ, խոխոջում է մերթ...  
Եւ հոգիս սփռում իր աչ ու թիւն,  
Մի սանձ եմ նետում շարմաղ շուրթերին,

Սանձն եմ նետում ես, որ հիւսել եմ հեղ  
Անմահ նիւթայի դիւթական վարսից,  
Աչքի ճաճանչից. օ, օղի հպարտ,  
Սէգ լուզորդն եմ ես, օ, օղի զուարթ  
Թաղաւորն եմ ես, միշտ խաղում եմ խենթ  
Մահու, շանթի հետ... Եւ անա թռչում՝  
Հուր-ծաղիկ հագլիս, անուշ անուրջում,  
Թռչում Պեգասիս երկու թևի գերկ,  
Սլանում եմ ես Հայրենի՝ երկինք...

Օ՛, ես Անհունի խենթ, խիղախ փեսան,  
Փեսան եմ ես այն. սլանում եմ սէգ  
Մահու եզրերով. նուաճում եմ շէկ  
Հազար հորիզոն... Ծիծաղում են ջերմ  
Աստղերն ամօթխած, կուրանում են մեղմ  
Առաջին շողից: Ու հագած վրան  
Շողը շապկի պէս, կայծակի նման  
Փայլատակելով, եթերքի միջին  
Ճախրում է իմ ձին, ինձ պէս հուր հագած  
Առաջին շողից... Եւ անա յանկարծ  
Մի վեհ, աննման նուազի մրմունջ,  
Եղեմի մի ձայն... Եւ բոյր ու շունչ  
Ախ, այնքան անուշ: Ու վեր եմ նայում:

Ա՛մպ է մի քուլայ, որ առաջ սահում,  
Անճշ, անարատ գալիս է ծուփ-ծուփ...  
Ո՛, այդ Աստծու հառաչանքն է սուրբ,  
Որ նազ է տալիս, իմ գիրկն է գալիս...  
Օ՛, թելիկ-թելիկ բրբրում ես  
Եւ հարբած ու հեղ բերկրանքից վառում,  
Դող, թրթիս դառած զմայլում, հալւում:

Եւ աչքս բացում, տեսնում եմ ես պարզ՝  
Ամպեղէն ծովում Յաւելի մի Հարս,  
Մէջքին երկնքի հօթ ժպիտ, փնջիկ—  
Լիքը հմայքով եօթ գօտի, կնիք.  
Վաղուան ծիրանի հորիզոնն ուսից,  
Բիւրեղ քարծուներից յետ - առաջ փռում,  
Ծով արզանդն ի վեր փռում, ափռում.  
Աստղերը պսակ իր ճակատին յստակ.  
Եւ մաղերն իրրեւ սաթի շող ու շիթ,  
Ճաճանչներն են խիտ, որ լեռան լանջից  
Փռուել էին ցած, բայց անա յանկարծ  
Ետ եկել գիշերն աստղերի ցանցից,  
Սև, սև է ներկել. և աչերն անչափ  
Լիքն անուշ կապոյտ ու անուշ սարսափ...  
Ո՛, էակ չքնաղ, Հայկական Հովտի

Ձիւնեղէն-Շուշան, լի բոյր ու բոցով,  
Աստծու շնչով: Ո՛ր, Յեղիս Ոգի,  
Էակ բերկրաւէտ, Հայկական երկրում  
Ժամանակների անհուն ծալքերում  
Հազար սիրուններ, ճ, հազար-հազար  
Սիրուններ պառկել սուրբ ու նազելի՝  
Հայոց Հողի մէջ, Անհունի պայծառ  
Գիրկն են ուղարկել իրենց աչերի  
Անուշուրթիւններն ու հուրը վճիտ,  
Շարմաղ շուրթերի բոյր, շունչ ու ժպիտ...  
Եւ հազար հայեացք անուշիկ ու ջինջ  
Մասսի փէշերից, Եփրատի հզրից  
Հազար հառաչանք ու ծիծաղ թովիչ,  
Սէր, գեղ նորանոր ցօղում ամեն օր,  
Վերանում են վեր՝ Հայկական եթեր...  
Ողջ դու ես այս, Կոյս, որ եկար այդ լոյս  
Ամպի ծրարում. երազել եմ Բեզ  
Ես մանուկ օրից, Բեզ եմ աղօթել,  
Անվերջ կարօտել ու ձգտել եմ ես  
Աստղերի միջով, ասես դէպի ծով  
Հեղեղը դարձնան հազար բարձունքից...  
Օ՛ր, իմ լոյս-փարոս, երկնքի շուրթից  
Իմ քայլերն ես թոյլ ուղղղել շիտակ,  
Նայել կրծքիս տակ, լուսով ողողել

Հոգուս անգունդներ, բախտաւ ցօղել  
Մռայլ խոցերիս ու լցրել անբաւ  
Երկնքի ծարաւ... Ամեն ալիքում,  
Ամեն ծաղիկում զգացել Բո շունչ,  
Ձգացել եմ ես Բո բոյր ու շունչ.  
Օ՛ր, իմ Թագուհիս, աստղերի շուրթից  
Ժպիտդ կաթել, ծովի կապոյտից,  
Գինուս թասի մէջ Բո պատկերն էր պերճ,  
Որ ժպտում էր միշտ... Անհունը տեսել  
Մի շողովն աչիդ և դժուր իջել,  
Անցել հայեացքիդ մի չնչին շիթով,  
Անմասն ձայնիդ մի հատիկ շեշտով  
Ձգացել եմ ես Յաւերժը մինչ վերջ,  
Այնքան իղձ ու տենչ և այնքան հմայք,  
Օ՛ր, իմ վառք-պսակ...

Ու գրկին սղմած  
Մանգաղը լուսնի—մտքիս, զգացմանց  
Աղբիւրը բիւրեղ, շողերը շոյում,  
Նուազում է Կոյսն՝ ինչ էս եմ խորհում.  
Ու պարում է ձին եթերքի միջին...  
Եւ մենք աջ ու ձախ թևերի վրան...  
Ես ցած եմ նայում և Կոյսն անմահ

Նուազում է ողջ՝ ինչ տեսնում եմ ես,  
Ե՛ս տեսնում արհա ու կարգում այսպէս.—

Ահա ոտիս տակ բիւր գոհար գմբէթ  
Մարգարտի պէս ջինջ մշուշի միջև  
Հազար ու մի ձև խաղում շողքի հետ,  
Ծիծաղում են մեզմ... Այն Հայոց հազար  
Բարձունքներն են ձիւն, պճնուած պայծառ  
Արևի ցոլքով, առաջին շողքով,  
Այն գոյն-գոյն օժեած, արևից օրհնւած  
Պարն է Հայկական—մի տիտան շղթայ,  
Փոթորկուող ծովի փրփրուն, հսկայ  
Զմրուխտ արիքներ, բիւր ափ ու կղզի...  
Եւ արհա գետերն Աստուածաշնչի.  
Հանգստի ծարաւ ու ոլոր-մոլոր  
Զգւում են խոր-խոր դէպի արևելք,  
Մերթ հիւսիս, հարաւ, ձգւում են բեկ-բեկ...  
Անվերջ ափօսներ, լի շող-աստղերով,  
Ծիրանի գինով... Այն ոսկի խխուշ,  
Գաւաթներ են բիւր՝ լի ծիծաղ, մրմռնջ—  
Ծովակներն են կոյս: Երկինքը գարնան  
Այս գիշեր լացել ու, որպէս մանկան,  
Լուացել է ողջ: Ու բացւում երկրի  
Արգանդը փարթամ—այգեստանների

Բիւր չքնաղ պատկեր, մարգեր, հովիտներ  
Ծաւալում են պերճ, պճնուած մինչ վերջ,  
Լիքը ցօղ ու բոյր... Ահա բլրակներ՝  
Մեղմ, գողտրիկ, զմրուխտ, ալիքանման  
Պար բռնած այնպէս, գոհար վտալներ,  
Որ ծիծաղ են բիւր անգնդի վրան  
Ցօղում գոյնգոյն... Օ՛, հրաշք, հանգէս...  
Եգեմայ պարտէզ—արևի վարսից  
Ու ծաղկից հիւսած հրաշալի մի գորգ՝  
Լիքը բոյր ու ցոլք, կանաչի թաւից,  
Ամպերից հիւսած հրաշալի թաղիբ՝  
Լիքն անթիւ աստղիկ, որ փոռւել-ցրուել  
Մինչ Մուշ ու Սասուն ու ետ է փոռւել  
Մինչ ափն Արաքսի, փէշը Մասրախ...  
Օ՛, զոր Հողեղէն Աստուածը հերկել  
Այս երկիրն անափ ոսկի գութանով,  
Մշակել բիւր մարգ, պէս-պէս է ներկել  
Արևի, ծաղկանց գոյնգոյն արնով...

## II.

Եւ նոր ու նորից բացւում ոտիս տակ,  
Ու պարզւում են բիւր հրաշք-պատկերներ.  
Ահա մարմարէ, ձիւնից ըսպիտակ,

Քաղաքներ անթիւ և շէն-աւաններ,  
 Ճակատներն օծուած Աղուեստի ցոլքով.  
 Եւ երկրի խորքով, հազար հողմի հետ,  
 Հուր, շողի շնչում, սլանում է խենթ  
 Հսկայ մետաղեայ մի Հրաշք-Սողուն.  
 Եւ ամեն կողմից շնդ, շփնդ, որստ—  
 Այն մութն է թնդում ու կերտում գոյն-գոյն  
 Հազար հրաշալիք... Ահա արևոտ  
 Ելաւ գեղջուկն էլ՝ արցունքը ճակտի  
 Մայր-Հողի յստակ ըստինքին թափի.  
 Օ՛, հրաշք, հրաշք—դարերով անջատ,  
 Արդ՝ իրար արժան Հայն ու հողն ազատ,  
 Պսակուած ընդմիջտ՝ իրարու գրկում...  
 Ու մի հրաշքից հազարն է բղխում—  
 Ահա գոյնգոյն հօտերը պէս-պէս  
 Հեղեղի նման ծաւալում են հեղ  
 Հայոց աշխարհի բիւր հազար հովտով՝  
 Լի ցօղ ու հլւթով... Հորիզոնն է մինչ  
 Ծաւալուել ցորենն, ասես առիւծի  
 Շէկ, առատ բաշեր... Եւ հնչում է ջինջ  
 Մինչ թէն արծուի, հնչում հայացի  
 Բարբառը փարթամ—ողջ երգ ու պատգամ...

Եւ այդ աշխարհում ծնւում թագաւոր  
 Ու ծաղկում են ողջ. և քամու նման  
 Միշտ կայտան, ազատ... Եւ լի, բախտաւոր,  
 Կատարած իրենց հասակի շրջան,  
 Զուարթ ծիծաղով Մայր-Հողն են իջնում.  
 Այդպէս ծովի մէջ արեն է մեռնում,  
 Եւ հասած խնձորն, ինքն իրեն պոկուած,  
 Այգեպան ծերի գիրկն է ընկնում բաց...

Ո՛, Աստուած, Աստուած... Արեւից կաթած  
 Ու հազար տարի ցօղուած արցունքով,  
 Օ՛, հազար տարուան՝ օծուած աղօթքով  
 Երանք Հայի, որ տեսնում հո՛ ես՝  
 Փամանակներն հեռու խորքերում,  
 Գալիք օրերում փթթած պէս-պէս...  
 Օ՛, ողջոյն Եդես, կանաչ-անդառառ,  
 Արնոտ-արցունքոտ մոխրիցը ծնւած,  
 Քրտինքով սնւած Մանուկ-Հայատառ,  
 Ուր ձուկը ծովում և թռչունն օդում,  
 Մարդ հողի վրայ, ծաղիկը թփին  
 Տէր իրենց գլխին, գոհ ջրից, հողից,  
 Արեւից, օդից...

Եւ մի բիւրեղեայ  
 Չքնաղ աշտարակ Մասըսի վրայ  
 Հայոց լեռների բարձունքը մինչ վերջ  
 Պսակում է պերճ. եւ աշնտեղ բազմած  
 Հողեղէն Աստուած մեզմ գրոյց անում  
 Աստղի, լուսնի հետ, արեւի շուրթից,  
 Անհուն կապոյտից մի հատիկ շողով  
 Սէր, հրաշք ծով-ծով ու գեղ է քամում  
 Դէպի հովիտներ... Եւ մանգաղ, մահիկ—  
 Հրեղէն ծովի զոյգ անհաս ալիք,  
 Քոյր ու եղբոր պէս խաչ կապել մի վէս  
 Մասըսի վրան, պսակում են այն  
 Սիրոյ-Հանճարի Նոր-Ուխտի գմբէշ.  
 Իսկ աշնտեղ կրտսեր լեռների գլխին,  
 Մի մի պայծառ զանգ—մի մի բիւրեղ բերդ—  
 Այն Քաջ-Հայերի սուրբ, արնոտ սրտին  
 Կերտուած է մի մի կոթող նազելի —  
 Մարմար պատրոյգներ, խնկի խարոյկներ,  
 Լի հրաշք-հնչիւն, փառքի արձագանգ  
 Մի մի հսկայ զանգ...

Եւ ահա մտքի  
 Մոգը գերագոյն անհաս Մասըսի  
 Ալիքի վրայ հրաշալի, ծիծղուն

Մի կոճակ շոյեց... Ու ներքե իսկոյն  
 Հազար բարձունքից ղողանջում է ջինջ  
 Հազար-հազար զանգ... Եւ մանուկ ու ծեր  
 Ջիւնեղէն հագած խաղում է վեր, վեր,  
 Ծիրանի տալով ու ճակտին պսակ...  
 Վեր, վեր են խաղում, որ Հայոց յատկ  
 Հազար բարձունքում պատմեն աստղերին,  
 Ամպին, արեւին իրենց բախտ ու փառք,  
 Լոյս խմեն, հմայք աստղերի կշտից—  
 Յուշ խմեն աճիւն Քաջերի սրտից...

«Հաւքեր, ամպեր, ո՞վ է կայտառ,  
 Ո՞վ է պայծառ՝ մէնք, թէ՞ դուք.  
 Շող ու ծաղկունք, ո՞վ է պայծառ,  
 Ո՞վ է պայծառ՝ մէնք, թէ՞ դուք...  
 Հովեր, զովեր, մեղ պաչ արէք,  
 Մի պաչ առէք ու ցրուէք—  
 Ա՛խ, մեր բախտից մի քիչ առէք,  
 Մի քիչ առէք ու ցրուէք»...

Եւ Տօն է անվերջ... Ու ծաղկանց վրան  
 Հազար հովտի մէջ պսակի նման  
 Պարն է բոլորում... Եւ հայ աղջկայ

Հանդերձին, ճիմքին ամպն է նախանձում,  
Եւ կարապն ապշում... Եւ ահ, մահ չը կայ  
Այդ նոր աշխարհում, անսահման վայելք,  
Խաղ է կեանքը ողջ, հեքիաթ է, պար, երգ,  
Ուղին է այն սուրբ, որ սահում է ծով  
Ծաղկունանց միջով...

Եւ ես եթերից՝  
Արծուի թևից կարողում եմ այս ողջ՝  
Ու լուսնի շողով նուագում է մեղմ  
Երգիս Թագուին. մի մի ծով են բոց,  
Ծով բոց են ասես ու ձուլում են ջերմ  
Մեր երգ ու նուագ...

Յանկարծ՝ հառաչանք—  
Որ փռուեց վրաս մի սև ամպի պէս.  
Օ՛, խեղդում եմ ես...

Դառն էր, յիրաւի,  
Շունչը ժայռերի, որ գլխիս տակին  
Հարաւի շողքից բորբոքում էին...  
Օ՛, ես երկնքի զինուոր-թևաւոր,  
Հեռո՛ւ, միայնակ, ընկած վիրաւոր,

Ականջս դեռ լի աստղի շշուշով...

Եւ գիտն արցունքիս, քրտինքս ծով-ծով  
Ծորում գլխիս տակ՝ այն շէկ ժայռերին,  
Իւղի, խնկի պէս պլպլում էին...

Ո՛հ, այս ընագմի հառաչանք էր, հե՛ք,  
Որ ահա փռուեց վրաս ասես մէգ...



## Երկրորդ տեսիլներ

Դժոխային մրրիկը, որ բնաւ չի դադրել,  
Տանջէ գիւրենք շրջաշրջով, բաղխելով...

Պժոխ VI երգ.

Պանոսէ:

### I.

Եւ ցրուեց աչքիս խաբուսիկ ու սին  
Մշուշը ոսկի—երազի՛ն փռչին...  
Ո՛ր, իմ սաւառնակ... Ողջոյն փոթորկոտ  
Անհունի մակոյկ, մարդկային մտքի  
Հրաշալի՛ն պտուղ, ճ, ես թևաւոր  
Երկնքի գինուոր... Ու իմ արծըւի  
Երկու թևն եմ ջերմ փաղաքշում ես մեղմ  
Եւ թռչում անա երկու թևի գիւրկ,  
Փէշս լիքը թուխ բիւր թունոտ պտուղ,  
Սլանում եմ ես Հայրենի՛ն երկինք...

Ո՛ր, ոտիս տակին այն դժոխն է սև,  
Որ ես է գալիս հազար ու մի ձև...

Այն բոց է պատել, ծուխ է փաթաթել  
Հայոց բարձունքներ. Հայի հիմն ու նոր  
Մե, կարմիր ցաւի ուրազանն է խենթ,  
Որ՝ լցուել անա հազար սար ու ձոր,  
Երկինքը ելնում կամ իջնում է մերթ  
Անդունդը խաւար, ես է գալիս խոր,  
Հազար ամպի պէս հեկեկում է գոռ  
Ու նորից տիտան Մասսի կրծքին,  
Փէշերին բախում, մերթ ետ է խաղում.  
Քարքարոտ Մասուն ու Մոկսը կրկին,  
Շփոթում է կոյր և նորից գալիս,  
Զորս կողմի վրայ բիւր յորձանք տալիս...  
Ու պատառ-պատառ այն ծովն է փախած  
Հայոց հեղեղի, զուլումի զարկում  
Քարուանդներն են այն, քարուանդներն են սև,  
Որ հազար-հազար փոթորկի միջև,  
Շալակած անչափ, սև, անչափ սարսափ,  
Հողմերի առջև, շփոթուած, անձև՝  
Մերթ խաղում առաջ, մերթ մղում են ետ...  
Զուլումի հազար քարուանդներն են խենթ,  
Մերթ փռնոտ, այրած, մերթ ցրտից վառւած  
Ու փշուր-փշուր... Հայոց վիշտն է ծով,  
Որ յայտնի, թաքուն անթիւ ճամբէքով

Հեղեղու՛մ անքուն օրե՛ր, գիշերնե՛ր,  
Անթի՛ւ տարիներ, ժ, միշտ մեծանում  
Ու չի վերջանում...

Ու ցած եմ նետում,  
Մերթ շանթի նման վեր-վեր եմ շեղում:  
Եւ նոր ու նորից բացում են ներքե,  
Ծաւալում են բիւր պատկերներ սեւսեւ...  
Ու տեսնո՛ւմ եմ ես՝ խնջոյքներ, խնդում...  
Ո՛ր, բաշը խանձուած գազանն անկշտում,  
Թիւերն արնոդող այն ճանձ ու ագռաւ  
Ու Քուրդն է վայրագ, աւերի ծարաւ,  
Որ հարբել են խենթ ու պա՛ր են գալիս...  
Եւ ծափ են տալիս, քրքջում են գոռ  
Ժայռերը Հայոց ու տնքում են խոր,  
Արնոդող ծաղկած. կարմիր քրքջում  
Դաշտեր, անտառներ, ծիծաղում են սև  
Աստղերի ներքե. այն բոցն է թռչում  
Հազար ծովի պէս. հօտերն են ծուփ-ծուփ,  
Այն Հայի պայծառ արտերն են սուրբ-սուրբ.  
Ես արտերն անա՛փ, շղարշներ իւզոտ,  
Իւզի ծովի պէս հազար ու մի հօտ,  
Բոց կտրած պարում սև ու ցաւն իրենց

Ու փռում են մեծ դաշտերի վրան  
Ամպերը մոխրի՛ թագի՛րի նման...

Օ՛ր, Հայոց հազար հովիտը լցուած  
Հազար-հազար հարս ու փեսայ հնձուած...  
Այն Հրէշն էր հին, առաւ գերանդին—  
Պողպատէ ծովի փոթորկոտ ալիք,  
Զ՛ընդ... դարկեց այսպէս բիւր շուշան,  
կաղնիք...

Եւ բիւր պատանի, բիւր տեղից մորթուած,  
Բիւր անուշ ողկոյց կարմիր կոխոտուած—  
Եւ Հայոց հազար հովիտը մի-մի  
Հնձաններ են ծով՝ լի մատաղ գինի...  
Եւ Հայ անարատ մանուկներն առատ,  
Հայոց դաշտերի ցորենի նման,  
Թափուած շեղջերով ճամբէքի եզրով,  
Գազանի հետքի, տատասկի վրան...  
Եւ արդեօք՝ նրանց կտուցը սրած  
Անգղե՛րն են սև-սև դայիակ լինելու,  
Որ օրօր ասեն, կարդան ալիււ,  
Աստղերն աչերի մէկ-մէկ հանելով,  
Սրտերի գինին անուշ անելով...

Ո՛ր, այդ էլ զո՛ւք էք... Օձի խորիս չկայ,  
 Ժայռերի ներքեւ, թփերի ետեւ  
 Խոտ չկայ վայրի՝ ծածկէք բլբլեղեայ  
 Ձեր լանջ ու սրունք, ձեր պատմութեան  
 Շուշան մերկութիւն... Օ, իմ Հայ քոյրեր.  
 Ձեզ չխնայեց մոնղոլը վատթար,  
 Ձեր լանջը թէ՛ն սուրբ սեղան էր դեռ..

Իսկ նրանք՝ մայրեր... Այն ո՞վ կը հայէր,  
 Կընայէր այնպէս նրանց աչքի մէջ,  
 Որ շուրթը կարմիր չգեղնէր մինչ վերջ.  
 Հայ մայրերն են, ո՛հ, աչքերը դեռ լի  
 Աւերի ծխով... Ուրուներն են հէք՝  
 Սե գիշեր հագած... անթաղ մեռելի,  
 Օրօրոցների հառաչանք է, հեք  
 Իրենց ականջում, Օ, ետ են կանչում...  
 Ու նրանց ետեւ շնորք կտրին,  
 Անտէր շէմքերին զօղանջում են խնթ  
 Փլուռոյ ժամերի զանգ ու խաչի հետ...

Ո՛ր, այնքան ցաւից ծննդկանն անգամ  
 Փախաւ դարհուրած, շաղ տալով իր ծով  
 Արգանդի երկունքն՝ արգանդի ճիւղով...

Փախաւ պատանքից և հիւանդն անկամ...  
 Եւ նրանց համար ապաստան դարձաւ  
 Գիրկը հայրերի, — շիրիմն ահռելի,  
 Օձի, գայլի բոյն — սե ճեղք ու անձաւ...  
 Եւ այսքան ցաւից սարսուռ, դողաց  
 Հայ հազար տարուայ ոսկորը հողած...

Եւ Հայոց գետերն արիւնով հարբած —  
 Բիւր դիակ լափած բիւր վիշապ գետեր  
 Կանգ առել մուշ-մուշ ու՛ կանգնած են դեռ...  
 Եւ Հողը Հայոց այնքան ցաւ ու սուգ  
 Եւ մեռել ունի ու լալու փափագ,  
 Որ չէին բախ՝ թէ ծով արտասուք,  
 Կտաւ կտրէին ամպերը բամբակ,  
 Հայոց երկնքի ամպերը մարմար...  
 Հայի պատանքի ու լացի համար...  
 Եւ Հողը Հայոց սրտածաք լինում  
 Ու դուրս է վիժում պապերի փոշին,  
 Հառաչանքն ասես ծովի գոլորշին,  
 Որ առնում է հողին ու հիւսիս ցրում  
 Եւ զէպի հարաւ, արեւմուտ սփռում...  
 Եւ Հայոց հազար ճանապարհներով  
 Հայի վիշտն է հին, Հայի ցաւն է ծով

Հեղեղում անքուն օրեր, գիշերներ,  
Անթիւ տարիներ ու միշտ մեծանում  
Ու չի վերջանում, ո՛հ, չի վերջանում...

## I I.

Ո՛հ, ազգ իմ դու Հայ, ազգ իմ, դու. որը անգ...  
Ո՛հ, փէշն օտարի փուշ դառաւ, տատասկ  
Քն դողդոջ ձեռքում... Քո սուրբ արիւնով  
Վարդերի գոյնով Արարատ սարի  
Ձիւնն ահա ծաղկեց, ազգ իմ, ազգ այրի.  
Խնկեղէն-գառնուկ, որ ձիւնի նման  
Մուխ դառար խաչուած խարոյկի վրան,  
Անյայտ ճամբէքում քաղցից, ամօթից,  
Անհուն կարօտից հալ ու մաշ եղած,  
Գունամտ, սրտնեղած ազգ իմ աղօթող,  
Օտար ափերում ծնրադէր, դողդող,  
Ազգ իմ արցունքոտ, անքուն, անձնուրայ  
Ազգ իմ անմուրադ, սիրտդ շրթունքիդ  
Ախ կտրած ու վաշ, ճակտիդ սև ու խիտ  
Ամպ կտրած անհուն, խարուած, խարդա-  
խուած,  
Դժոխքի շապիկ--սև-գիշեր հագած,  
Ա՛զգ իմ, ազգ այրի, ամեն, ամեն օր  
Հին վէրքի միջին վէրք ունիս դու նոր.

Ծանապարհների արիւնոտ եղրի  
Հրաշալի-յասմիկ, որ հանում հալարտ  
Գլուխդ հաղար ոտերի տակից,  
Ծաղկում ես էլ ետ արցունքոտ, զուարթ  
Ու ցօղ ես ծծում անընդոտ աստղից.  
Դու՛ ոսկի-մեղու, որ քո սուրբ այգու  
Լոյսի ծաղկունանց բոյրն էիր շնչում,  
Ու հաղար գոյնի ծիծաղը ծծում,  
Հիւսում էիր դու մեղր հայացի,  
Հիւսում Աստծու ծիծղուն բաղարջի—  
Արևի նման մեղր աննման...  
Դու՛ ոսկի-մեղու, փեթակդ այրուած,  
Օ՛հ, խայթի վառուած թոյնովը ոխի  
Քո կեանքը տալով հրէշ-ոստի  
Սիրտն ես մխել դու, թվ արի մեղու...  
Հողմ ընկած տատրակ, աջ թևդ կրակ  
Ձախ թևդ արիւն... Սարսափի, մութի,  
Մահուան անդունդի վրայից ընկած,  
Աշխարհի երկու գագաթը գրկած  
Գրանիտ կամուրջ, որ օր ու գիշեր  
Բիւր հսկայ ցեղեր անցան վերևից  
Բախտի ետևից... Ձիւնոտ լեռների  
Շանթով դաբնւած դալար եղևնի,  
Որ դարձն, ամառ, բիւր գարեւ անմար,

Ճիւղբովդ սրտիդ մութնսն ես դեռ շնչում...  
 Սրտիդ մխի մէջ սենն ես մըմնջում,  
 Սե օձը վզիդ մոլորումս՝ եղնիկ,  
 Որ զեփիւռ ծծում, սպիտակ շուշան,  
 Կաթ էիր տալիս՝ նազելի՛, մեղմիկ,  
 Կաթ էիր տալիս հազար գայլ ու շան.  
 Օ՛, ձուկ նազելի, որ մի ժամանակ  
 Թագունի էիր բիւր ծով ու գետում,  
 Ափն էիր նետում գոհար անքանակ...  
 Օ՛, ձուկ նազելի, օտար ափերի  
 Թէժ մոխրին ընկած, որ հեռւմ ես խենթ,  
 Թպրտում ես մերթ, անդդ իմ կոխոտուած,  
 Խորթ, մերժուած, մենակ, խաչուած-խորով-  
 ուած  
 Ու փշուր-փշուր ու պատմութիւն-պատմութիւն  
 Իմ հէք Հայութիւն, քուն չունիս, դադար.  
 Ո՛ւր ես փախս տալիս. երկրում տեղ չկայ  
 Քեզ համար, կասեն, և լուսնի վրայ,  
 Ազգովին մեռած ու ոգի առած,  
 Երկնքումս ես այն ապրելու միայն...

Օ՛, հերթը. արծիւ... Ու թե ենք առնում,  
 Եւ մուխը Հայի երկնքում խմած,  
 Թե ենք առնում մենք, հարաւ սաւառնում,

Արեան գոլորշուց, բոյրիցը շմած,  
 Թե առած ու թափ սլանում ենք մենք.  
 Եւ տհա ձորեր՝ լի մոռլ ու մէդ.  
 Ո՛, ազնիւ ու հին Ոստանի որդիք,  
 Այրուած Հայութեան դուք զմբուխս սատիկ...

«Հայոց լեռներով,  
 Լեռների ծէրով  
 Կանցնի շատ ու շատ  
 Սե ամպ ու քամի, սե արծիւ ու շանթ...  
 Հայոց դաշտերով,  
 Դաշտերի եզրով  
 Շատ կըգայ յորձանք,  
 Շատ կ'գայ, կանցնի սե օձ ու փորձանք...  
 Հայոց լեռների, Հայոց դաշտերի  
 Ամպի, հեղեղի,  
 Շանթի, մորեխի,  
 Քամու, փորձանքի, սե օձ ու ջրի,  
 Արծրւի նման  
 Ամեն օր կըգան  
 Տաճիկ, Արար, Քուրդ—Հայի հին ու նոր  
 Դուշմանը բոլոր,  
 Դուշմանը սովոր,  
 Կ'գան ու կանցնեն, կանցնեն ամեն օր...»

Շատախցիկն է քաջ, որ խոտ ծամելով  
 Ու խաչ հանելով վառողի ծխում  
 Թուխ-թխպած ճակատին, ետ-ետ է մղում,  
 Թշնամու ճանկից, ոտերի տակից  
 Ճանկոտում է խենթ. Հողը հայրենի,  
 Օծուած քրտինքով, փոշով պապերի...  
 Օ՛, փառք նաև ձեզ, որ ծնուած տատրակ,  
 Այդ բիւր արծուից թև ու թափառաք,  
 Լաչակի տուտով ձեր շուրթը ծածկած,  
 Շիկացած իրիկ ու շամփուր ճանկած,  
 Կռիւ իջաք դուք,—մուրը չանձրելի  
 Ձեր մարմար ճակատին և շողն արեւի  
 Չառնեն ուրիշից ձեր աղջիկ, տղան,  
 Երբ յետոյ խիտ-խիտ ու պայծառ կըգան...

Եւ՝ ծուխ շաղ տալով ու բոց վերելից,  
 Թշնամու գլխին մեր երկու թևից  
 Պատիժ թափելով, սլանում ենք մենք  
 Դէպի արևմուտ. բարձունքներ են սէգ՝  
 Ամպ կոխած ու ձիւն... Սէ՛, անծայր մի ծով  
 Լեռները պատել, աղաղակելով,  
 Եո, եփ է գալիս ու ծառս է լինում  
 Փոթորկոտ ալիքն անհամառունչ...

Ու ծփում է դեռ այն սև ծովերում  
 Հայկական գանձով լի վերջին խստենջ—  
 Խենթերի կղզին, աշխարհն ինքնիշխան...  
 Օ՛, Կարմիր-Սասուն, մեր Արնոտ-Սեղան...

Եւ անքան փառքից հարբած վրնջում  
 Սաւառնակն իմ սէգ, մի պար է շրջում.  
 Այն թնչ էր սակայն, ո՛, անհուն ցաւման  
 Մի բոց էր պայծառ, մի հսկայ լեզու  
 Որ ծառս եղաւ մինչ ոտերն Աստուծո.  
 Ո՛, աւեր Ձէյթուն, որ մխում ես խենթ,  
 Չայրոյթի օջախ, բոցկլտում ես մերթ...  
 Ո՛, Հայի կրակ, չես հանգչի ծովով...  
 Ո՛, քո դառը մուխն ո՞վ չղգաց, ո՞վ, ո՞վ,  
 Որ քնք է կրծքում, որ կրծքումս իր սիրտ  
 Ու սրտի խորքում գուժ ունի մի շիթ...

Եւ սակայն իզուր դժուրքի այս բիւր  
 Խաղերով հարբած ծառս լինում յոխորտ,  
 Գալարում է խենթ մոնղոլը ոխոտ,  
 Աշխարհասասան, որ պոչով պատել  
 Սիփանը չքնաղ, պատել-փաթաթել,  
 Բիւր ճանկերն արնոտ մերթ Մուշ է մխում,

Մերթ աւեր Զէյթուն. գլուխը հիւանդ  
Դրիկ է մի վատ դայեակի գրկում,  
Հելլադա երկրի չքնաղ ափերին  
Թքում երկնքի աստղ—աչերին,  
Մուր է թքում ծով, ապականութիւն—  
Արտասուք-արիւն, որ լափել է պիղծ  
Իր բիւր չ'րախով անթիւ սրտերից  
Օրէր, գիշերներ, անթիւ տարիներ...

Ո՛, այգպէս, այգպէս, դու՛ Բրիտտ-վարպետ,  
Դու՛ Ֆրանկ-ասպետ, բիւր ծովի եղրով  
Առաջ քշեցէք, դանդաղ հօտերով  
Քշէք յովազներն այդ բիւր պղնձի,  
Հուր-կայծակ կերած ու մահով յղի.  
Առէք օդ ու ջուր, օդ արէք հմլը, սմլը,  
Հրէշի գլուխն առէք, քնկղմէք,  
Ներս առէք գլուխն ու սղմէք, սղմէք...

Իսկ այն՝ հիւսիսից զազախներն են սէգ,  
Որ ասես դարնան կայծակն ամպերում,  
Ձիերին ձուլուած, սլանում են շէկ,  
Խաչը վզներին՝ մահ-պատիժ բերում...  
Եւ կարմիր-Ուխտի Հայ-խմբերն են բիւր

Հուր-շապիկ հագած, մահու գոյն ու բոյր...  
Օ՛, Մայր-Հայաստան, բառաչդ հասաւ,  
Նեղոսը յուզեց, աշխարհով դարձաւ  
Մինչև Միսիսիպ. և Հայը ցրուած,  
Յրումծ-սփռում աշխարհից-աշխարհ,  
Յոյգ, թրթիւ դառաւ ու վառուեց պայծառ...  
Ու գալիս են արդ մեծ-մեծ ճամբէքով,  
Ծովով, գետերով վառուած Հայութեան  
Բոցոտ կաթիլներ... Օ՛, բիւր Հայն է նոր  
Գալիս հարսնուր իր Մօր Յարութեան...



Վ. Ե. Բ. Զ. Ա. Բ. Ա. Ն

— . . . —

Հայոց երկնքում ամպ կայ շատ ու շատ.  
Ու շրջում ահա սաւառնակն իմ սէգ,  
Սլանում եմ ես, սլանում եմ շէկ.  
Ու՛ հարբած քաղում ես կայծակ ու շանթ,  
Շաղ եմ տալիս խենթ թշնամու գլխին  
Ու վեր եմ թռչում, վեր ու վեր կրկէ՛ս,

Որ աստղ քաղեմ, շող, ժպիտ անմար,  
 Հրեշտակների թևերը փետրեմ,  
 Ամպից, արեից հուր-դափնի բերեմ,  
 Պսակ հիւսեմ ես քաջերի համար.  
 Օ՛, վեր եմ թռչում՝ արեան գոլորշով,  
 Մայրերի ախով շուրթս լիքը խոր,  
 Ա՛խ անեմ, յուզեմ իմ ծնվ հառաչով  
 Աչերն Աստծու և Իր սիրաբլ Հօր.  
 Բայց ահա յանկարծ ներքևից մի բուռ  
 Կայծ թռաւ ոխի, ծուխ թռաւ վերև  
 Ու սիրտս թափուեց մահու բոց ու բոյր,  
 Հազար ու մի ցաւ, հազար ու մի սեւ...  
 Ու՛ ես էլ դժոխ աշն խենթ անձրևի  
 Գիւղն ընկայ բարձրից, ես էլ գլխովայր  
 Սև-գիշերն ընկայ, որ Շողն Արեւի  
 Ձմուրան Գրդից իմ քոյր ու եղբայր...



18418

ԳԻՆՆ Է 10 Կ.

2013

